ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ 46-ՐԴ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Սույն թվականի մայիսի 4—5 օրերին Օկլենդի ս. Վարդան եկեղեցում տեղի է ունենում Հայաստանյայց եկեղեցու Հյուսիսային Ամերիկայի արևմտյան թեմի 46-րդ թեմական պատգամավորական ժողովը՝ նախագահությամբ առաջնորդ տ. Վաչե եպս. Հովսեփյանի:

Մայիսի 4-ին, ուրբաթ օրը, ներկայությամբ 42 պատգամավորների, նախագահ սրբազան հոր աղոթքով բացվում է ժողովի Ա նիստը՝ ատենապետությամբ դոկտ. Արթուր Փեթոյանի: Նշանակվում են «Բանաձեվերի», «Շնորհակալության և գնահատության», «Քվեախույզ», «Ընտրողական» և «Ժողովավարական» կանոնների մեկնաբանման հանձնախմբերը:

Այնուհետև քննարկվում են թեմական խորհրդի և ամառային ճամբարի հանձնախմբի տեղեկագրերը:

Բ նիստը բացվում է մայիսի 5-ին, շաբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին՝ ներկայությամբ 35 պատգամավորների:

Առաջնորդ սրբազանը ներկայացնում է իր տարեկան տեղեկագիրը և տալիս իր պատգամը ժողովականներին:

Այնուհետև քննարկվում են թեմական պատգամավորական ժողովի գումարման կանոնական որոշ կետեր:

Գ նիստը սկսվում է նույն օրը, ժամը 13-ին: Ներկայացվում և վավերացվում են հաշվեքննիչ հանձնաժողովի, գանձապահի և թեմական բյուջեի տեղեկագրերը:

Սույն նիստում կատարվում են թեմական ժողովի, թեմական խորհրդի և հաշվեքննիչ հանձնախմբի նոր ընտրություններ:

Որոշվում է 47-րդ պատգամավորական ժողովը գումարել առաջնորդարանի մեջ՝ Հոլիվուդում:

Սույն նիստում թեմական պատգամավորական ժողովը արձանագրում է իր «Հավատարմության զգացումները հայ եկեղեցու հոգևոր պետին Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա-ին» և մաղթում շուտափույթ ապաքինում վերջերս ունեցած իր հիվանդությունեն: